

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բարին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒՆՎԱՐԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով Մենք ստանում ենք սեփական ՀԱՌԱՊԵՐՆԵՐ՝
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՎԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բազմաբնույթ փողոցների անկիւնում, Թաւմաշկի տանը).
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗЪ.“

Въ 1890 году газета „Кавказъ“ будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и недѣльныхъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисъ.	Съ перес. по Имперіи.	По почтовому союзу.
На годъ..... 11 р. 50 к.	На годъ..... 13 р. — к.	На годъ..... 18 р. 40 к.
„ 1/2 года..... 6 „ — „	„ 1/2 года..... 7 „ — „	„ 1/2 года..... 10 „ — „
„ 3 мѣсяца..... 3 „ 50 „	„ 3 мѣсяца..... 4 „ — „	„ 3 мѣсяца..... 6 „ — „
„ 1 мѣсяцъ..... 1 „ 50 „	„ 1 мѣсяцъ..... 1 „ 75 „	„ 1 мѣсяцъ..... 2 „ — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.

Для иногородныхъ адресоваться: Тифлисъ, въ редакцію газеты „КАВКАЗЪ“.

Отъ Конторы. Объявленія изъ Москвы, С.-Петербурга, Царства Польскаго и изъ-за границы, кромѣ Франціи принимаются исключительно въ центральной конторѣ объявленій, бывшей Л. Метцль, въ Москвѣ, Мясницкая, домъ Спиридовова.

2—3

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կեղծաւոր սէրը.— ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պ. Չերնիսեւի զեկուցումը Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանգիստի մասին. Նաեւ Երևանից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդրախի յարաբերութիւնը գէպի վատիկանը. Ֆրանսիա և Գերմանիա. Բեֆօրմների խնդիրը Թիւրքիայում. Մուսաբէյի դատը. Մեղրում-խան. Արտաքին լուրեր.— ՀԱՌԱՊԵՐՆԵՐ.— ԲՈՐՈՍ.— ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԵՂԵԱՌՈՐ ՍԵՐԸ

Սերել իր ժողովրդական, ազգային դարեւոր հաստատութիւնները կարելի է դառնալ կերպով. կարելի է սերել նրանց անկեղծ, կարելի է սերել նրանց և կեղծաւոր կերպով.
Կա, մեր կարծիքով, կեղծաւոր սէր է մի հասարակութեան կողմից գէպի իր դարեւոր հաստատութիւնները, երբ այդ հասարակութիւնը ամեն ջանք է գործ դնում նոյն անշարժ դրութեան մէջ պահպանել իր այս կամ այն հաստատութիւնը, ինչ դրութեան մէջ այդ հաստատութիւնը գտնվում էր դարերից ի վեր յետ մի յայտնի հաստատութեան կազմակերպութիւնը լաւ և ժամանակի պահանջման յարմար էր համարվում, դիցուք, չորրորդ կամ հինգերորդ դարում.— այդ չէ նշանակում որ նոյն հաստատութիւնը կարող է նոյն կազմակերպութեամբ գոյութիւն ունենալ և նոյն օգուտը բերել և տասն և իննսորորդ դարում:

Ընդհանրապէս, ամեն մի հասարակական հաստատութիւն դարերի ընթացքում իր կուսման բարձրութեան վրա պահպանվելու համար պէտք է անդադար վերանորոգվի, որպէս զի օգուտէն լինի, յարմարեցվի ժամանակի պահանջներին և համապատասխանի ժամանակակից կարիքներին. եթէ ոչ, միշտ անշարժ մնալով նա վտանգի մէջ է ընկնում քայքայվելու, իր նախնի օյժերը կատարելապէս սպառելու և այլ ևս չէ կարող առաջվայ պէս հասարակական կեանքը ղեկավարել հասարակութիւնն առաջնորդել:

Եւրոպական ազգերի թւում գուցէ ոչ մէկը այնքան խանդոտ, այնքան հաւատարիմ չէ եղել իր ամբողջ պատմութեան ընթացքում գէպի իր դարեւոր հասարակական հաստատութիւնները, որքան անգլիական ազգը.— բայց և ոչ մի ազգ դարերի ընթացքում այնքան չէ վերանորոգել արմատական կերպով և անընդհատաբար իր բոլոր հաստատութիւնները, որքան անգլիացիք: Նրանք հասկացան, որ սերել իրանց ազգային հաստատութիւնները նշանակում է պահպանել նրանց. իսկ պահպանել հասարակական հաստատութիւնները նշանակում է շարունակ նորոգել իր թաւանցիկ նրանց կազմակերպութիւնը ժամանակի պահանջման, ժամանակակից ոգու պահանջների համեմատ: Պահել անշարժ կերպով որ և է հաստատութիւն այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ այդ հաստատութիւնը գտնվում էր տաս դար առաջ.— չէ նշանակում պահպանել այդ հաստատութիւնը, այլ ընդհանրապէս նշանակում է անտես առնել նրա գոյութիւնը, թող տալ որ յիշեալ հաստատութիւնը իր ընկալման մասով մեռնի, ոչնչանայ: Կարելի ընթացքում ուղեւոր պահել մի հաստատութիւն անպայման անշարժութեան մէջ.— նշանակում է կեղծաւոր կերպով սերել այդ հաստատութիւնը:

Միայն այն մարդկային հասարակութիւնները կարող են պարճանքով և բարձրակի կերպով ստեղծել որ սերում են իրանց բոլոր հասարակական հաստատութիւնները, որոնք ամեն ջանք են գործ դնում պահպանել նրանց:

Իսկ ինչպէս կարելի է պահպանել

մի որ և է հաստատութիւն. մի միջոցով միայն այն է անդադար ներշնչելով եղած դարեւոր հաստատութիւնների մէջ նոր ոգի, ժամանակակից պահանջներին համեմատ կազմակերպութիւն տալով նրանց, անդադար յարմարեցնելով այդ հաստատութիւններին կազմակերպութիւնը այսօրվայ կարիքներին, որպէս զի յիշեալ հաստատութիւնը միշտ պիտի կանգնի հասարակական առաջնութեան կեանքին, միշտ առաջնորդէ հասարակութիւնը և երբեք դուրս չը մնայ հասարակական կեանքի հոսանքից:

Ուղեւոր ընդհանրապէս, պահպանել իր ազգային կամ հասարակական այս և այն հաստատութիւնը նոյն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ նա գտնվում էր ութ, ինն, տաս դար առաջ.— նշանակում է կեղծաւոր կերպով սերել այդ հաստատութիւնը, նշանակում է խօսքով միայն հաւատացնել որ սերում ենք յիշեալ հաստատութիւնը, բայց իրական պահելով նրան դարեւոր անշարժութեան մէջ, նշանակում է անդադար անել նրան, զրկել նրան իրաւունքից այսօր նոյն դերը խաղալու հասարակական կեանքի մէջ, ինչ դեր նա խաղացել է շատ դարեր առաջ, նշանակում է դատապարտել նրան անգործութեան:

Պարճենալ որ մեր այս ինչ հաստատութիւնը տալ դար առաջ օգուտէն և գործունեայ էր, համապատասխան էր ժամանակի պահանջներին, բայց մի և նոյն ժամանակ ամեն միջոց գործ դնել որ այսօրվայ օրը նոյն հաստատութիւնը իր կազմակերպութիւնը, իր բնաւորութեամբ համապատասխան չը լինէր ներկայ դարի պահանջներին, այլ մնար այն, ինչ որ էր դարերից ի վեր.— նշանակում է կեղծաւոր կերպով սերել այդ հաստատութիւնը, նշանակում է չուղեւոր որ յիշեալ հաստատութիւնը նոյն ոյժը, նոյն նշանակութիւնը ունենար, ինչ որ ունէր դարեր առաջ, նոյն հասարակական դերը խաղար, ինչ որ խաղում էր տաս կամ տասն և հինգ դար առաջ:

Յաւալի և յանցաւոր երեւոյթ է, այո, երբ փոստ ապրանքը ծախվում է լաւ ապրանքի տեղը.— ցաւալի և յանցաւոր երեւոյթ է նմանապէս, երբ կեղծաւոր հասարակական սէրը անկեղծ սիրոյ տեղ է վաճառվում:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. ՉԵՐՆԻՍԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԶՈՒՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կեկեմբերի 21-ին ներկայ գտնվեցաւ Պետերբուրգի Կայսերական ազատ տնտեսական ընկերութեան արած պ. Չերնիսեւի զեկուցման ընթերցութեանը, որով նա նկարագրեց անցեալ աշնան Թիֆլիսում կայացած գիւղատնտեսական ցուցահանգէրը:

Մենք այստեղ ընթերցողներին ծանօթացնելու ենք այդ զեկուցման միայն ընդհանուր հոլմերի հետ, ի նկատի ունենալով այն, որ նա կը տպվի շուտով ամբողջապէս ազատ տնտեսական ընկերութեան աշխատութիւնների մէջ:

Ինքը պ. զեկուցանողը յիշեալ ցուցահանգիստի կառավարչներից մէկը լինելով, իր ասելով մտ ծանօթացել է Կովկասի գիւղատնտեսական դրութեան հետ: Կենդանի և զեղեցիկ ոճով նա պատմեց իր տպաւորութիւնները ցուցահանգիստից և իր տեսածը Կովկասի մի քանի տեղերում:

Առանձին-առանձին նկարագրելով գիւղատնտեսութեան վերաբերեալ ձեւերը, պ. Չերնիսեւի ամեն անգամ վերջացնում էր իր խօսքը նրանով, որ Կովկասը բնական հարուստ և բազմազան էր, մինչդեռ նրա բնակիչները կիսաւայրենի և անկրթ են. չը նայելով Կովկասի

առօստաց տիրապետութեան տակ անցնելու ահագին ժամանակամիջոցին, այնու ամենայնիւ այդ սքանչելի երկիրը գիւղատնտեսութեան մէջ ոչինչ առաջադիմութիւն չէ արել:

Պ. Չերնիսեւի կարծիքները պարունակվում են հետևեալում:

Հողագործութիւնը Թիֆլիսի նահանգում հասարակական դրութեան մէջ է գտնվում. երբ կը տեսնէք այն խօսքը և զեղեցիկ ցորենը, որը երբեմն բուսնում է վրաց դաշտերում, ապա կը մնաք, մանաւանդ երբ կը համոզվէք, որ այդ տեսակի հետ զուգընթաց բուսնում են, անհամեմատ մեծ քանակութեամբ ամենատար տեսակները, շատ անգամ այնպիսիները, որոնց դուրս է դանազանել գարնանը. վրացի իր հողը մշակում է այնպիսի գործիքներով, որոնք պարզ ապացոյց են այդ ազգի անկրթութեան:

Այգեգործութիւնը նոյնպէս թշուառ դրութեան մէջ է: Այդի իր նուրբ նշանակութեամբ Կովկասում չը կայ: Մրցելու ծառերը բուսնում են բանջարեղէնների հետ միասին, չորութիւն կամ լոյս սիրող բոյսերը բուսնում են մէկ հրապարակի վրա այնպիսիների հետ, որոնք պահանջում են մշակման խնամքութիւն կամ տուներ Պտուղները ժողովելու գործ են դնում բարբարոսական միջոցներ. կամ ամբողջ ծառը ցնցում են, կամ ահագին փայտերով ծառի ձեւերին խփում, քնսեղով և պտուղներին և ծառերին Այդ տեսակի անկատար միջոցներից և հանգամանքներից անշուշտ հետեւում է այն, ինչ որ նկատվում է և Թիֆլիսում, որ ջուղի մրգեր չը կան, թէպէտ պատահում են տանձի, խնձորի, դեղձի և այլ մրգերի այնպիսի անհամեմատ, որոնք աղողութեամբ կը մրցեն.— հաշվված Ֆրանսիայի և Միացեալ-Նահանգների նոյնանման պտուղների հետ, որ արժան միջոց նոյնպէս չը կայ և որ այն, ինչ որ վաճառվում է կամ թանկ է, ինչպէս Պետերբուրգում ու Մոսկուայում, կամ բոլորովին ուտելու չէ իբրեւ դէպքում, այլ պիտանի է միայն կերակրել համար:

Գինեգործութիւնը միւս ձեւերից հետո չէ գնացել, չը նայելով, որ Կովկասը կարելի է առնուանել խաղողի երկիր, ուր չը կայ համարեա տեղ, որը վրա խաղողը բուսնել հնար չը լինէր Կովկասի խաղողից պատրաստվում են զել-խաղորպէս կախելի կոչված գինիներ և դանազան եւրոպական տեսակները Չը նայելով այդ բաղաւոր հանգամանքներին, Կովկասում լաւ գինի գտնել անկարելի է. իրանք տեղացիք չեն կարող չնորոգել գինի գտնել և ստիպված են առնանկեղտոտ տեղական դարձուրը խմել: Կովկասում ոչ այնքան աշխատում են բարեբեղ գինին, որքան կեղծ միջոցներով նրան վաճառել: Պ. Չերնիսեւի պատահել է Թիֆլիսում խմել լիկեօրներ տեղական խաղողից պատրաստած, անկարողութիւն վատ համով, բայց մի և նոյն ժամանակ այդ լիկեօրները արտաքին տեսքով չեն զանազանվում եւրոպայի երեկի ընդհանրական, չարտեօզ և այլ լիկեօրներից. Կովկասից պատրաստված է նոյն ձեւի չիչի մէջ, նոյն է տիկեօտով. նոյն կնքով և այլն և այլն, և միայն մի տեղ կարելի է կարգաւ միկրոսկոպիակայն տեսնելով գործած. «Saradgeff à Tiflis»....

Գիւղատնտեսական կենդանիների մասին ոչինչ բաղաւոր չէր կարելի կազմել, որովհետեւ ցուցահանգիստում զբաղեցրած բացակայ էին:

Կովկասի դանազան տեսակի պանիրները այն աստիճան վատ, կեղտոտ և անհամ են օտարի համար, որ նրանք իրանց այժմեան դրութեան մէջ ոչինչ նշանակութիւն չեն կարող ունենալ երկրի արդիւնաբերութեան համար. Կովկասում չիկցարական պանիրներ պատրաստում է միայն Կուչնեւսկը, որոնք թէպէտ և բարձր արժանաւորութեան են, բայց Կովկասում նոյնպէս թանկ են, ինչպէս և Շվեյցարիայից բերած պանիրները: Կուչնեւսկի օրինակին հետեւողներ համարեա չը կան:

ԻԳՐԻՐԻՄ ասացանք մի յայտարարութիւն իդ-
ղիցի մի քահանայի դէմ Նամակի մէջ ներ-
խակված էր 3 բուրի յայտարարութիւնը ՎՆակի-
մէջ տպագրելու համար Բայց որովհետեւ յայ-
տարարութիւնը պաշտօնապէս վաւերացած չէ՝
կամ երեցփոխի, կամ տանուտէրի կողմից և չէ-
լիւում որ ևս պաշտօնական կնիք, այդ պատ-
ճառով մենք յայտարարութիւնը չենք տպում և 3
բուրլին արդէն փոստով յետ ենք ուղարկել իզդելի,
այն պարտի անունով, որը մեզ ուղարկել է մի-
եակ փողը իսկ յայտարարութիւնը և ծրարը
մենք պահում ենք խմբագրութեան մէջ, որպէս
հետաքրքիր զօկուձնանք,

պաշտօնակատար Բազումյանը նշանակվում է այդ ղեկավարման մեջ փոխարինելու և Թուրքիայի գեներալ-նահանգապետ գեներալ Բազումյանի, Բարձրագույն հրամարտակով, որի մեջ նրան Բարձրագույն հրամարտակովի է պատգամաբերել ժողովի նախագահը:

ՄԱԳԻՐԻ, 2 յունվարի Թագաւորը առողջանում է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 յունվարի Հրատարակված է Բարձրագույն օկլադ, որով այն հողերը, որոնցով օկլադում էին կուրանի կողմերը, տրվում են այդ կողմերին իբրև մշտական սեփականություն, բայց զրանց նրանց տրվում են և Միխայլովսկայա և Բելոբեկսկայա կողմի անտառային ամարանոցները, այլ և այսպէս կոչված լեռնային տեղերը: Այնպէս որ միևնույն ժամանակում է Պետերբուրգի նահանգապետ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ մշակվում է երկու նախագիծը, երկուսն էլ գծեր անցկացնելու համար՝ որոնցով կարելի լինի միացնել հարաւային Ռուսաստանը Անգլիոյկային հետ: Առաջին նախագիծով մտադրվում է կայ միացնելու Վլադիվոկայից Պետրովսկի հետ, որտեղ զինք կապան եղբայրը կը հասնի մինչև Բազում. երկրորդ նախագիծով — Բոստով-Վլադիվոկայից հետո հասնաւորի կայարաններից մէկը միացնել Գորու հետ Բոկի վրայով: Գորանը այդ երկու գծերի վրա էլ տեղի կունենան լրացուցիչ հետազոտութիւններ: — Կամուր Նախարարի մասնաժողովը հաշիւը երևում է, որ վերադառնալու նախադրման օգտին ցանկացողները 100 մարկ — 43 > 80 > Գորուի վրա 100 ֆրանկ — 35 > 57 1/2 > Ոսկի — արժէք — 7 > 28 > Մարաշի կողմերը — 144 > 50 > Արմաթ — 1 > 10 > Բորսային գիւնդները — 6 > 70 > Պետական բանկի 5% տոմս 1-ին շրջանի — 99 > 37 > — 2-րդ — 99 > 37 > — 3-րդ — 99 > 12 > — 4-րդ — 99 > 50 > — 5-րդ — 99 > 37 > — 6-րդ — 99 > 12 > Նոր 40% — 84 > 62 > Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. — 100 > 50 > — 2-րդ — 100 > 50 > — 3-րդ — 100 > 87 > Ներքին 50% առաջին փոխառութիւն — 245 > — > երկրորդ — 228 > — > 5 1/2% ընտա. — 102 > — > Ոսկեայ բնուտա. — 161 > — > Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. — 135 > — > Նոր երկաթուղային բնուտա. — 99 > 75 > 50% գրաւակաւ թղթեր կալուած. — 142 > 25 > փոխ. կրեդ. ընկ. մեռ. — 93 > 25 > — թղթայ. — 99 > — > Գրաւ. թղ. Ազնւ. բանկի — 102 > 25 > Գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 > 43 > — > 60% գրաւ. — 94 > 50 > — փոխառութիւն — 18 > 43 > — > Ս. Պետերբուրգի բաղադրային օքլի-գաղտնիք — 95 > — > Մոսկույի բաղադր. օքլի-գաղտնիք — 94 > 50 > Օդէսայի — 94 > 50 > Թիֆլիսի բաղադր. կրեդ. ընկ. օքլ. — — > — > Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Թեան նախագահը կերթայ արդեօք Բրիտանի, ուր սպասվում է գերմանական կայսրը բեկիական թագաւորի 25 ամեակի առթիւ: — Յուլի նորից ընտրված է պատգամաբերների ժողովի նախագահը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 յունվարի Առաջին ներքին փոխարինելու տոմսերի պատկերը կատարված տիրաժուռ, գլխաւոր գումարները ընկան հետեւեալ տոմսերի վրա:

№ սերիայի	Կողմեր	Գումարը	№ սերիայի	Կողմեր	Գումարը
№	№	№	№	№	№
9.413	24	200.000	1.850	19	
9.011	25	75.000	19.584	32	ն
13.593	14	45.000	8.472	12	
13.614	32	25.000	5.214	32	
19.805	17	10.000	16.397	29	ս
7.544	30	10.000	3.366	25	
3.306	49	10.000	14.124	15	հ
2.027	4		4.418	2	
11.526	31		16.125	1	
16.843	31		7.606	5	
18.511	26		2.207	18	ս
9.905	49		11.228	40	
4.095	14		12.335	18	
18.569	8		14.526	3	
11.494	47		5.281	20	0
10.384	9		14.744	20	0
14.376	46		8.817	33	0
9.215	44		8.482	14	1
2.169	42		1.846	38	0
11.359	49		14.364	25	0

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ Յունվարի 2-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ. — 86 ր. 60 > Բերլինի վրա 100 մարկ — 43 > 80 > Գորուի վրա 100 ֆրանկ — 35 > 57 1/2 > Ոսկի — արժէք — 7 > 28 > Մարաշի կողմերը — 144 > 50 > Արմաթ — 1 > 10 > Բորսային գիւնդները — 6 > 70 > Պետական բանկի 5% տոմս 1-ին շրջանի — 99 > 37 > — 2-րդ — 99 > 37 > — 3-րդ — 99 > 12 > — 4-րդ — 99 > 50 > — 5-րդ — 99 > 37 > — 6-րդ — 99 > 12 > Նոր 40% — 84 > 62 > Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. — 100 > 50 > — 2-րդ — 100 > 50 > — 3-րդ — 100 > 87 > Ներքին 50% առաջին փոխառութիւն — 245 > — > երկրորդ — 228 > — > 5 1/2% ընտա. — 102 > — > Ոսկեայ բնուտա. — 161 > — > Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. — 135 > — > Նոր երկաթուղային բնուտա. — 99 > 75 > 50% գրաւակաւ թղթեր կալուած. — 142 > 25 > փոխ. կրեդ. ընկ. մեռ. — 93 > 25 > — թղթայ. — 99 > — > Գրաւ. թղ. Ազնւ. բանկի — 102 > 25 > Գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 > 43 > — > 60% գրաւ. — 94 > 50 > — փոխառութիւն — 18 > 43 > — > Ս. Պետերբուրգի բաղադրային օքլի-գաղտնիք — 95 > — > Մոսկույի բաղադր. օքլի-գաղտնիք — 94 > 50 > Օդէսայի — 94 > 50 > Թիֆլիսի բաղադր. կրեդ. ընկ. օքլ. — — > — > Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵՍՆՅԻ

ԳՏՆՎՈՒՄ Է ՍՈՒՈՒԱԿ, ԳԱՆՈՎԱԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ԾԱՀՆԱԶԱՐՈՎԻ

ՅՈՒՎԱՐԻ 1-ից ՍԿԱՍՏ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՆԻ ԳԻՄՆԱՎԵՐԻ, ԲԵՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ, ԿԱԳԵՏՈՒԿԻ ԿՕՐԱՊՈՒՆԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ:

Ուսումնարանում, բացի զանազան գիմնագիական առարկաներից, աւանդվում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ:

Ցանկացողները կարող են ԴԱՇՆԱԿԻ (բոյալ) վրա պծել սովորել. զրա համար պահանջում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ:

Ուսումնարանում ընդունվում են ԵՐԹԵՆԻԿՆԵՐ, ԿԻՍԱԹՈՇԱԿԱՆՈՐՆԵՐ ԵՒ ԹՈՇԱԿԱՆՈՐՆԵՐ:

Հասցէն. Тифлисъ, Гановская улица, домъ Шахназарова. 1—5

Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել ի գիտութիւն մեր ԿՈՎԱՍՍԻ պատուելի ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿԱՅԻՑ տեղեկութիւն եմ ՎԱՐՇԱՎԱՎԱՆ, և զարձեալ ընդունում եմ ամեն անհաւ յանձնարարութիւններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒԵԳՈՐՍ Լինելով առնում եմ և ուղարկում եմ մեր յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ և զրա վերաբերաւ ապրանքներ: Ծանօթ եմ նոյնպէս զայնաւերական և ուրիշ ապրանքների հետ իմ հասցէն. ВАРШАВА, Товмасы ЯРГУЛЯНИЦЪ. Перебздъ, домъ № 3.

1—20 (Ե. 2.)

ԵՐԴՈՒՆԱԿ ՀԱՄԱՍԱՐՄԱՍԱՐ

ՄԻՏՐՈՅԱՆ ԱՆԴՐԵՅՎԻՉ ՄԻԼԻՏԵՐՆԵԿՈՎ

Ընդունում է՝ առաւօտները 9—11 ժամը, երեկոյան՝ 6—8 ժամը, Հասցէն. Սօլոյակ, Ֆրէյլինսկայա փողոց, տուն № 6. 1—5

ԼՈՒՄԱՅԻ «ԿՈՂՈՊՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ» վեպը վաճառվում է՝ Թիֆլիսում—Կենտրոնական գրափաճառանոցում և Բագու—Կասպեան գրափաճառանոցում: Գինն է՝ 1 ռուբլի: Գիրքը ձեռք բերել ցանկացող օտարաքաղաքացիք կարող են դիմել և այս հասցէով՝ Тифлисъ, Типография канцел. Главногоначальствующаго, Сергѣю Симоновичу Назарянцу. 9—10 (2.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՂԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Զորեղաբեր, յունվարի 17-ին, ՄՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգնաւոր, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում լէմօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ Նախկին Արժուրի գալլիերէսը, № 114. 1—3

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԽԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՍԱՐՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՍԱՐՆԻՆԻ ԿԱՐԻՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕՎԱՑԻՆԵԱՆ ԱՍԱՐՆԵՐԻ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՐՆԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՆՈՐ ՊԱՀԵՍ:

ԹԻՖԼԻՍԻՄ Կովկասեան զեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակկէրի, Սէնչի-կովսկու և Ագմուրովի զեղատներում: ԲԱԴՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօրչեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բորինսկու մօտ և ԵԿԱՆԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ: 46—52 (Հ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏՆԵՐԸ

ԲՈՒԴԱՎՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայց և կանանց ց. ԿԻՆԻՐԻՇԿ ԻՍԱՀԱԿԱՆՑ—11 1/4—12 ժ. կանանց և երեխայց ց. ԲԵՆԿԻՆՎԱԿԻ—11—12 ժ. ականջի, կողորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբույ. և ատամագաւ) ԱՐՏԵՄԻՆՎԱԿԻ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայց ց. բացի կիրակի:

ԵՐԵԿԱՆԵՐԸ

ԳԱԴՈՒՄԱԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՓՈՒԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայց և ջղային ց. (էլեկտրոտերապիա): ԲԵՆԿԻՆՎԱԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մանկաբարձուհի ԵՐԻՍՆԵԱՆ և ԱՐՄԱՂԵԱՆ: ճար—50 Կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերահսկող ԲՈՒԴԱՎՈՎԱԿԻ

„Մ Ո Ւ Ր Ժ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ա. Մ. Ս. Ա. Գ. Ի. Ր

1890 թ.

„Մուրճը“ 1890 թվականին հրատարակվում է նոյն ծրագրով, որպէս 1889 թվին:

„Մուրճի“ բաժանորդներին է տարեկան 10 ռուբլի: Ուսուցիչները վճարում են 9 ռ., իսկ ուսանողները՝ 8 ռուբլի: Ընդունվում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս, առաջին կիսամեակում բոլորը վճարելու պայմանով:

Թիֆլիսում զբղւում են, բացի խմբագրատանից, Գանձակայա փողոց, Նախկին տուն Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԻԱՆԻ, նաև հետեւեալ տեղերում: 1) Գրափաճառանոցներում, 2) Խիշեկէի պաւլիթում, Արեւմտեանցի ալոու անկիւնում, 3) պ. Տէր-Յովսէփեանցի ծխախոտի խանութում Երևանեան հրապարակի վրա, 4) պ. Գեորգիան եղբ. գրասենեակում՝ պ. Խ. Երազկեանի մօտ, Զուբալովի բաղամասայում: Ուրիշ տեղերից զիմում են՝ Тифлисъ. Редакция журнала „Мурчъ“. Արտասահմանից Tiflis (Caucase). Rédaction de la Revue „MOURTCH“. 2—2